



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



այ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ե Ի

## Կ Ա Ն Ո Ն Ք

Բ Ա Ր Ե Կ Ա Ր Գ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ի Ա Վ Ի Պ Ե Ա Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ե Ա Ր Ա Ն Ի

Ա Ջ Գ Ի Ս Հ Ս Յ Ո Ց .

99651



570

373/ԽԱԿԼԻՊՅԱՆ

Հ-29

Ի Թ Ի Ո Դ Ո Ս Ի Ս .

Ի Տպարանի Խաչիպեանի Ուսումնարանի Հայոց .

1859.

040  
12/17

**ՏՊԱԳՐԵԱՆ**

ՅԹ  
ԽԵՆ  
Դ

Հրահանգի Կերտեղի Խաչիպետի Առաջնահարկ

Հայրն :

720

2-29

2027-443 ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի ԱՆԻՊԵԱՆ ՈՒՍՈՈՒՄՆԱՐԱՆԻ

ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

Ի ԹԷՆՈՂՈՍԻԱ:



Միասնիս ամեն կողմերը, ամեն սերութեանց եւ ամենայն ազգաց մեջ Ռւսման եւ Ռւսումնական մարդկանց յարգը օրե օր աւելի հանգումելով, գրեթէ ամեն մարդ ետեւե է բան սովրելու, եւ եթէ իրեն սովրելու ասենք անցած է՝ իւր զաւակացը սովրեցրնելու հարը կնայի: Վասն զի ամեն մարդ ալ աղէկ հասկըցածի պէս է՝ թէ միայն ռւսմամբ եւ կրթութեամբ պիտի անցնին իւր որդիք այն նորաբողբոջ եւ ընտիր ժողովրդոց կարգը՝ որ աշխարհիս երեսը կարելի կամ ներեալ եղածին ջափ երջանիկ պիտի ըլլան նախ հոգւով եւ ապա մարմնով, եւ թէ միայն ռւսմամբ եւ կրթութեամբ պիտի պահեն ու պահպանեն իրենց հայրենի դաւանանքը, իրենց ազգային լեզուն, ազգային հոգին, ազգային կասաւելութիւնները. եւ թէ միայն Ռւսում եւ Կրթութիւն ունեցող մարդիկն են այսօրուան օրս անոնք որ սերութեան առջեւն ալ պատիւ ունին եւ մեծամեծ պատշտաններու կհասնին, կփառաւորուին, կերջանկանան:

3 MAR 2014 — 4 —

Ո՛րքան ուրախութիւն է ազգասէր <sup>Ս. Բ.</sup> արժից յետեւն  
 որ մեր ազգն այլ այս լուսաւորութեան փափափովը  
 վառուած է ամեն տեղ, եւ որպէս զի իւր որդիք  
 առանց ուսման ջանան՝ սկսէր է ծախսի եւ աշխա-  
 տութեան խնայութիւն ջրնել : Ազգասիրաց այս ու-  
 րախութիւնը մեկ կողմանէ միայն անկասար ու  
 սքսմախառն է, այսինքն անոր համար որ ազգիս  
 կարօտութեանցը նայելով՝ ազգային մեծկակ Ուսում-  
 նարանները խիստ սակաւ են :

Այս յետեւնով ազգասէր անձր՝ հարկաւ կնհածե-  
 րէ մեր շորս միլիոն ազգին մեջ երկու հարիւր հա-  
 զարէն աւելի պատանիք կը գտնուին Ուսման եւ Գի-  
 տութեան ջրոյն ծարաւի . հարկաւ կփափափի որ ա-  
 նոնց կրթութեան համար գոնէ հարիւր հաս, գոնէ  
 յիսուն հաս, գոնէ քսանհինգ հաս մեծամեծ ուսում-  
 նարաններ գտնուին աշխարհիս այլեւայլ կողմերը .  
 որով եւ քսանհինգ քսան տարուան մեջ ազգերնիս  
 ոչ միայն կորսուելու կամ փնանալու վտանգէն ա-  
 զատ կնհար, այլ եւ կնորոգուէր ու կպայծառանար  
 բարեպաշտ եւ բարեկիրք բաղաբացիներով, արդա-  
 բաւան եւ պատուաւոր վանառականներով, աշխար-  
 հասէս եւ իմաստուն իշխաններով, լեզուագէտ բարգ-  
 մաններով, նարսար արհեստաւորներով, հոգեւէր եւ  
 բազմահմուտ եկեղեցականներով, ազգաւան օրագիր-  
 ներով, գարծունեայ սպարաններով, հարուստ գրա-  
 տուններով, ազգային թանգարաններով, եւ այլն  
 եւ այլն :

Այս գովելի եւ իրաւացի փափափով կվառի բո-  
 յոր ազգասիրաց սիրքը, մանաւանդ այս տարիներս :

Միայն թէ այսպիսի ազգասիրաց մեջ անգամ խիստ սակաւաւոր են անոնք որ կասարելապէս հասկընան թէ նրբան դժուարութիւններ, որպիսի մեծամեծ արգելքներ կային ու կան եւս մինչեւ ցայժմ այն ուսումնարանները բանալու եւ ըստ պատշաճի յառաջ տանելու: Մեք միայն յիշատակեմք այս ջորս գլխաւոր արգելքները, որ են նախ՝ պակասութիւն փորձ եւ հմուտ վերատեսչաց. երկրորդ՝ պակասութիւն քաջ վարժապետաց. երրորդ՝ դժուարութիւն ուսումնարանաց ծախքը հոգալու. եւ չորրորդ՝ դժուարութիւն տնտեսական կողմանէ պէտք եղած հրամաններն ընդունելու:

Այս արգելքներուն մեծութիւնը ամենէն աւելի մեք հասկըցած ըլլալով, ըստ այնմ ալ մեծ ուրախութեամբ աւետիս կուտամք ազգասիրաց ու կրտսմք՝ թէ այժմ այն դժուարութեանց՝ այն արգելքներուն մէկ մասը վերցուած է, մնացածներն ալ որ ըստ օրէ վերցուելու վրայ են:

Եւ նախ զայն կհաստատեմք որ ժամանակիս լուսաւորեալ տնտեսական կողմանէ արգելք մը ջրգտնուելին զատ, զօրաւոր յորդորանքներ ալ կան բարեկարգ ուսումնարաններ բանալու, եւ իրենց հպատակներուն բարոյական եւ մտաւորական կրթութեանը օգնելու: Տանկատեսակի մեջ դպրոցներ բանալու համար յայտնի է թէ այժմ ամենեւին դժուարութիւն չկայ ժամանեան տնտեսական կողմանէ, անոնց մեջ ինչ ուսման սորվեցընելն ալ վերատեսչութեան ու վարժապետներուն ձեռքն է: Իսկ Ռուսաստանի մեջ եւս առաւել դիւրին է հրաման

ընդունել ամեն յետակ բարեկարգ ուսումնասրաններ՝  
բանայու եւ ազատօրէն կառավարելու համար, միան-  
գամայն եւ սերուքեան պատշապանութիւնը վայելել :

Երկրորդ, քեպէս եւ ամեն մարդ ալ սկսեւ է  
փոքր ի շատե հասկընալ թէ տղայոց կրթութեանը հա-  
մար տրուած ստակը կորսուած ստակ չէ, հասպա  
անոնց արտին եւ մտքին անգիտն կենդանութիւն մը  
սալու մտով պատրաստուած ապրուստն է, ուսի եւ  
նեղութեամբ ու ինչ մը դժկամակութեամբ ալ ըլլայ  
նէ՛ իր զաւակաց կրթութեանը համար ստակ կուտայ՝  
կարողութեանը համեմատ, սակայն որովհետեւ մեր  
ազգին մեջն ալ աղքատները աւելի շատուր են քան  
թէ հարուստները, կամք ու փափաք շատին քովը կայ,  
բայց կարողութիւն չի: Այս տեսնելով ահա քանի  
մը բարեյիտասակ եւ նշմարտապէս ազգասեր ու վե-  
հանձն Հայկազունի՛ յանձն առեր են իրենց փողո-  
վը դաստիարակութիւն սալ նաեւ օտար աղքատ տղոց :

Երրորդ, քաջ վարժապետներ այժմու ժամանակս  
այնչափ սակաւագիւտ չեն՝ ինչպէս որ աստեղով էին,  
այլ օրէ օր կաւելնան՝ քանի որ վարժապետութիւնը  
սկսեւ է մեր ազգին մեջ ծառայական պատշօններու  
կարգէն վեր ելլել ու իր ազնուականութեանը հա-  
մեմատ պատուաւոր վիճակ մը դառնալ : Այս այսպէս  
ըլլալով, փորձ եւ հմուտ վերատեսուչներ ալ կարելի  
է գտնել՝ այնպիսի վարժապետաց մեջէն խոհակա-  
նագոյններն ընտրելով, եւ ուսումնասիր պատուաւոր  
անձինք անոնց խորհրդակից սահմանելով :

Ահա այսպիսի ժամանակ, եւ ազգիս այսպիսի  
հանգամանացը մեջ բացուեցաւ երիմու Թեոդոսիս



հաղափս մեջ ԽԱԼԻՊԵԱՆ ՈԼՈՒՄՆԱՐԱՆՐ՝ հանու-  
թեամբ եւ հգօր պատշապանութեամբ Վեհափառ Կայ-  
սերն Ռուսաց :

Այս ՈԼՈՒՄՆԱՐԱՆԻՆ նպատակն է՝ ազգային բա-  
րեպատեւ եւ բարեկիրք դաստիարակութիւն տալ հայ-  
կազն պատշանեաց, եւ անոր հետ սորվեցրնել անոնց՝  
գիտութեանց եւ գլխաւոր գործածական լեզուաց մեջ  
ամենեւն հարկաւորներն ու օգտակարները :

Մեծապատիւ ՅԱՐՈՒՔԻՆ ԽԱՂԻՊԵԱՆ ազգասեր  
իշխանը իննապօծար սիրով կամեցաւ որ իւր ծա-  
խիւքը շինուի ՈԼՈՒՄՆԱՐԱՆԻՆ շէնքը՝ այնպիսի մե-  
ծութեամբ որ երկու հարիւր աշակերտ գիշերով ու  
ցորեկով կարենան միշտ մեջը հանգիստ կերպով դաս-  
տիարակուիլ : Եւ որովհետեւ թոշակաւոր աշակերտաց  
բազմութիւնը երբոր սահմանեալ թուոյ մը հասնի՝  
կարելի պիտի ըլլայ նաեւ ձրիավարժ աշակերտներ  
ընդունել, կամեցաւ որ այն ձրիավարժ աղբաս ա-  
շակերտներէն քանիսը *Խաղիպեան Սանկ* ըսուին :

Ս. ՏԵՂԻ ԵՒ ՏԵՍՉՈՒԹԻԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ,

Թեոդոսիա կամ Քեֆէ հաղափր, այս տարիներս  
նորաշէն երկաթե նանապարհով Ռուսաստանի երկու  
մայրաքաղաքացր հետ, այսինքն Մոսկուայի ու Փեթր-  
պուրկի հետ միանալու, անով կարգե դուրս կերպով  
մը ծաղկելու վրայ է. ուսի եւ այս ՈԼՈՒՄՆԱՐԱՆ-  
ԻՍ հիմնարկութեանը արժանաւոր տեղ նանջցուե-  
ցաւ : Անկեց ի զատ, Թեոդոսիոյ օդոյն առողջու-  
թիւնը, շրջակայ տեղերուն զուարեայի ըլլալը, Սեւ

ծովուն ամենայն գլխաւոր նաւահանգիսներուն հետ  
անդադար հաղորդակցութիւն ունենալը, — ասոնք  
ամենն ալ մէյմէկ գորաւոր պատճառներ էին այս  
ընտրութիւնս ընելու :

Խալիպէան Ուսումնարանին գլխաւոր վերաես-  
տութիւնը պահուած է Տեառն ԳԱՔՐԵԷԼԻ Վարդապե-  
տի Այվազեան՝ Առաջնորդի վիճակիս Նախօջեւանի  
էւ Պետարապիոյ . Խալիպէան Յարուքիւն Աղան  
Խնամակալ է Ուսումնարանին . իսկ անոր անմիջա-  
կան հոգաբարձութիւնը յանձնուած է վեց հոգւոյ՝  
ընդ նախագահութեամբ Առաջնորդին :

#### Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ .

Խալիպէան Ուսումնարանին աշակերտները առ-  
հասարակ մեր Հայոց Ազգին որդիքը պիտի ըլլան՝  
աշխարհիս ո՛ր էւ իցէ կողմերէն ընտրուած :

Աշակերտաց ընտրութիւնը Առաջնորդ վերաեստին  
գիտութեամբ կամ հաւանութեամբ կ'ըլլայ, էւ  
Թեոդոսիայէն դուրս գլխաւոր տեղեր իրմէ պատճո-  
նական կերպիւ կարգեալ գործակալաց ձեռօքը :

Աշակերտաց տարիքը առ այժմ 9-էն վար ա 15-էն  
վեր պիտի ջրլլայ :

Աշակերտաց մեջ երկու կարգ կայ գլխաւոր . մէկը  
թոշակաւոր, այսինքն ստակով սովորող, էւ միւսը  
ձրիավարժ :

Թոշակաւոր աշակերտաց տարեկան վճարելիքն է  
250 ռուպի արծաթի (1000 ֆրանկ), որ երկու ան-  
գամով կ'առնուի, այսինքն պատանուոյն Ուսումնա-

րան մսած ասէնը 125 բուլլի (որ է 500 Ֆրանկ), եւ վեց ամսէն 125 բուլլի. ըսել է թէ աշակերտաց սարեկան թոշակին կեսը պիտի վնարուի միշտ կանխիկ (փէշին) վեց ամսէ վեց ամիս: — Եթէ աշակերտի մը թոշակին այս վեցամսեայ վնարքը ուշանայ մինչեւ մէկ ամիս, աշակերտը անպատճառ կդարձուի իւր տեղը:

Աշակերտին ուսումնարան մսած ժամանակը՝ առաջին վեցամսեայ թոշակին հետ պիտի վնարուի նաեւ դառնալու համբուն ծախքը:

Ծնողաց հաշուին է առաջին անգամ աշակերտաց տուելու ներմակեղէնը՝ ըստ առաջիկայ ցուցակիս.

12 Շապիկ .

4 Սեղանի անձեռոց .

12 Վարտիք .

12 Թաշկինակ

6 Սաւան .

12 Գուրպայ :

6 Երեսարբիջ .

Սանտր, վրձիններ եւ այլն:

Առաջին անգամ տղուն տուելիք ամբողջ դրսի հագուստը պատրաստելու համար՝ մէկ անգամ միայն վնարելու է 50 բուլլի (որ է 200 Ֆրանկ):

Առանց Հոգաբարձուաց կամ Գործակալաց հրամանին չեն կրնար ծնողք իրենց որդիք յուղարկել յուսումնարանն:

Չրիավարժ աշակերտները Հոգաբարձուաց ժողովոյն հրամանովը կրնտուին ազգային դպրոցներուն մեջէն:

Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ.

Ուսումնարանին մեջ մասնաւոր փոյթ մը կայ միշտ աշակերտաց ուղիղ դաստիարակութեան վրայ, որոյ հիմունքն են գործնական բարեպաշտութիւն, բարի վարք, ազգասիրութիւն, եւ առ սերութիւնն հաւատարիմ հպատակութիւն :

Աշակերտաց խոյ պահապաններ ու վարժապետներ կան ամեն ժամանակ : Գիշերները ոչ միայն կանթեղ կվառի միշտ ննջարաններուն մեջ, այլ եւ մասնաւոր պահապան մը կայ որ մինջեւ ի լոյս արթուն կկենայ այն տեղը : Աշակերտները մինակ շրջագայելու ջեն ելլեր, այլ միշտ վարժապետի հետ, ու գիշերով ոչ երբեք դուրսը կմնան առանց հրամանի :

Ուսումնարանը մասնաւոր բժիշկ ունի, որ ամեն օր կուգայ, եւ եթէ հիւանդանոցը հիւանդ աշակերտ կայ՝ կնայի :

Հիւանդանոցին մեջ հիւանդապահ սանսիկին կայ որ ամենայն խնամքով կդարմանէ հիւանդներն ու բժշկին ապսպրած դեղերը կուտայ անոնց :

Ամենայն աշակերտք, թէ թուակաւորք եւ թէ ձրիավարժք, միօրինակ հպատակութեամբ եւ առանց արտօնութեան կհնազանդին ուսումնարանին կանոնադրութեանցը՝ ըստ բնակութեան, հանդերձից, կերակրոյ, ուսմանց եւ զքօսանաց :

Վեց ամիսը մէյմը վկայական կյուղարկուի ծնողաց՝ իրենց որդւոցը վարժին եւ ուսմանը վրայ :

Գ. ՌԻՍՄՈՒՆԻՔ .

Ուսմանց դասախօսութեան գլխաւոր մասը հայերէն է, ուստի եւ աշակերտք հայերէն դասաւորութեամբ կսովրին

Կրօնական եւ բարոյական կրթութիւն :

Հայկաբանութիւն, այսինքն հայերէն Քերականութիւն, Ճարտասանութիւն, Տաղաշափութիւն . նմանապէս

Պատմութիւն Հայոց :

Հին եւ նոր Աշխարհագրութիւն Հայաստանի :

Պատմութիւն ազգային Մատենագրութեան :

*Ուսման միւս նիւթերն են*

Ռուսերէն լեզու (կամաւոր վասն Օսմանեան հպատակաց) :

Տանկերէն լեզու (կամաւոր վասն հպատակաց Ռուսաց) :

Գաղղիարէն լեզու, եւ Պատմութիւն Մատենագրութեան Գաղղիացւոց :

Պատմութիւն ընդհանուր՝ հին եւ նոր Մատենագրութեան :

Պատմութիւն Հին ազգաց, Միջին դարու եւ Արդի ժամանակաց :

Պատմութիւն Ռուսաց եւ Օսմանեանց :

Աշխարհագրութիւն ընդհանուր՝ ուսումնական, բնական եւ քաղաքական :

Թուաբանութիւն եւ Հաշուետումար :

Երկրաշափութիւն, Հանրահաշիւ, եւ Եռանկիւնաշափութիւն :

Բնագիտութիւն , Բնալուծութիւն , Մեքենաբանու-  
թիւն :

Սկզբունք փիլիսոփայութեան , այսինքն Տրամաբա-  
նութիւն , Բնագանցութիւն եւ Բարոյական  
խմաստասիրութիւն :

Գծագրութիւն եւ Ուրուագրութիւն :


Բնական Պատմութիւն կենդանեաց , բուսոց եւ հան-  
գաց :

Երկրաբանութիւն :

Քաղաքական տնտեսութիւն :

Իրաւագիտութիւն քաղաքական եւ առեւտրական , եւ  
մասնաւորապէս Օրէնագիտութիւն Ռուսաց :

Ասոնք ամենն ալ այնպիսի ոնով պիտի սովորե-  
ցուին աշակերտաց , որ ամենուն եւս օգտակար ըլլան ,  
եւ ոչ ոք պատճառ չունենայ յետոյ զանգատելու որ  
անոնց համար պարտաւ ժամանակ անցուցեր է ու-  
սումնարանին մէջ :



# ԿԱՆՈՆՔ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ

## Ի ԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

Ա.ԶԳԻՍ ՀԱՅՈՅ.

### Ա.

Առաւօտեան զանգակը զարնուելուն պէս՝ ամէն աշակերտ երեսը կրիսաշակնիէ եւ կրհագուի անդանդաղ փուրով եւ համեսութեամբ. յետոյ կըլուացուի, կըսանճուի եւ պատրաստ կըկենայ իւր անկողնին հով: Ննջարանէն ելլելու համար, առաջին նշանն որ տեսնուի՝ ամէնայն աշակերտք կ'ելլեն հանդարտութեամբ եւ սրահին մէջ կըբարուին, կըկենան հասակի կարգաւ: Ով որ կարգին մէջ զգնուի, պարտաւի նշանակ մը կ'առնու:

### Բ.

Երկրորդ անգամ զանգակ զարնուելուն՝ վերսկացուն նշան կուտայ, եւ աշակերտները աղօթքի կերթան զոյգ զոյգ. ամէն աշակերտ իւր համար որոշուած տեղը կըկենայ, կարդացուած աղօթքը մտիկ կ'անէ, եւ ջափաւոր ձայնով ուրիշներուն հետ միաբան կըկրկնէ հասարակաց ասելու կտորները:

Գ.

Աղօթարանէն ելլելը զոյգ զոյգ եւ լռութեամբ կր-  
լինի : Ամենքն ալ սրահին կամ բակին մեջ կրճա-  
րուին, եւ նշան տուելուն պէս՝ իւրաքանչիւր խումբ  
իւր դասարանը կերթայ :

Դ.

Դասարան մտնելէն ետեւ՝ ամէն մարդ իւր գգրո-  
ցին առջեւը կրկենայ, մինչեւ որ վերակացուն  
հրամայէ ուսման գրքերը ձեռք առնուլ. վրան մէկ  
վայրկեան կանցնի, վերակացուն նորէն նշան կու-  
տայ, եւ համարներուն պատասխանները կրսկսի :

Ե.

Բոլոր ուսման ժամանակը սաստիկ լռութիւն  
կրպահանջուի :

Զ.

Ամէն աշակերտ պարտական է նոյն օրուան եւ  
ժամուն համար սահմանեալ ուսման պարտապիլ.  
ուրիշ իր եւ իցի ուսում եւ գործողութիւն արգելած է :

Է.

Մէկը ջերմար տեղէն ելլել առանց հրամանի. ինչ  
որ տեղէն ելլելու հարկադրուած լինի՝ ձեռքը վեր  
վերցնելով հրաման կրիսնորի վարժապետէն կամ վե-  
րակացունէն :



Ը.

Դասարանն ելլելու եւ ջուր խմելու կամ հարկաւորութեան եւ կամ ուրիշ տեղ երթալու հրաման ջկայ. — եթէ հարկ եւս լինի՝ հրամանը դժուարաւ կրտուի, եւ ելլող աշակերտը հանգստեան ժամանակը դասարանը կրմնայ եւ վարժապետին գրի մը մեջէն որոշած հասուածը կօրինակէ:

Թ.

Ամենեւին հրաման ջկայ գրերը, տեսակները, գրիջները, մասիտները եւ ուրիշ ուսումնական գործիքները կտրտելու, աղտոտելու, փնացնելու: Բոլոր այս բաները մահուր պիտի պահուին, եւ իւրաքանչիւր ուսմանէ ետքը կոկ կերպով պիտի շարունակ գգրոցներուն մեջ. այս պատրաստութեան համար մեկ վայրկեան ժամանակ կրտուի: Նոյնպէս արգելած է գրատեղանները, նրասարանները եւ գգրոցները կտրտելն եւ աղտոտելը:

Փ.

Միայն կեսօրուան հանգստեան ժամանակին կրմնայ ամեն աշակերտ իրեն պէտք եղած թուղթը, գրիջը, թանաքը ուզել եւ առնուլ:

ՓԱ.

Դասատեսակների գաս՝ ինչ գիրք որ գտնուի վարժարանին մեջ, տեսուչը ստորագրած պիտի լինի այն գրիքի հակասը:

ԺԲ.

Սասիկ արգելի կայ ուրիշի գգրոցը բանալու,  
եւ անկեց ո՛ր եւ իցե բան առնելու :

ԺԳ.

Առաւօտեան ուսմանեն ետեւ վերակացուն բոլոր  
աշակերտներն ալ աջե կանցնե, եւ կրնայի որ մա-  
ֆուր լինի հագուսները, գլուխները եւ ձեռքերը :  
Աղտոտ գտնուողը նախաճաշիկէն կրգրկուի :

ԺԴ.

Մաքրութեան այցելութիւնը լմրննալէն ետեւ, ա-  
մեն աշակերտ հաշարանը կերթայ յռութեամբ եւ  
կարգաւ, եւ իւր տեղը կրկենայ մինչեւ որ աշակեր-  
տաց մէկը բարձր ձայնով աղօթքը ասե. յետոյ ամեն  
աշակերտ կրնսի ուտելու հանդարտ, մաքուր, վայե-  
լու՛ եւ հաղափար կերպով՝ առանց սեղանին վե-  
րայ բան թափթրփելու եւ առանց հացը կտոր կտոր  
անելու :

ԺԵ.

Ճաշարանին մեջ ծիծաղողին կամ խօսողին փոք-  
րագոյն պատիժն է՝ պտուղի կամ տեսակ մը կերա-  
կուրե գրկուիլ :

ԺԶ.

Ճաշարանին մեջ միմեանց հետ կերակրոյ փոփո-  
խութիւն անելու հրաման չկայ. ամեն աշակերտ  
դիմացը դրուած կերակրով գոհ պիտի լինի :



Ամենեւին հրաման ձկայ՝ սեղանին հաց պահելու  
 եւ որ եւ իցե ուսելիք վերցրնելու

**ԺԸ.**

Օրուան մեջի երեք անգամուն կերակուրներէն  
 դուրս՝ ուսելու բան չսրուիր :

**ԺԹ.**

Սեղանին ելլելու նշանը սրուածին պէս՝ ամեն  
 աշակերտ կելլէ կարգաւ սրահին կամ բակին մեջ  
 կրճարուի, եւ կրպպատ վերակացուի նշան տալուն՝  
 որ գբօսանի սկսի :

**Ի.**

Հանգստեան եւ գբօսանաց թամանակը՝ աշա-  
 կերտք միմեանց հետ վայելուք բաղաճաւարութեամբ  
 պիտի վարուին, եւ խօսակցութիւնները պիտի լինի  
 Ռուստեան կամ Գաղղիարէն, սակաւ երբեմն Հայերէն  
 կամ Տանկերէն : Սասիկ կերպով արգելած է աղա-  
 դակել, կռուիլ, միմեանց հող նետել, ծանր խօսք  
 ասել, ձեռք վերցրնել :

**ԻԱ.**

Հաւաստի վերայ հակաճառութիւն անելու՝ ամե-  
 նեւին հրաման ձկայ :

**ԻԲ.**

Մեծ եւ փոքր աշակերտները շէն կրնար մեկ տեղ  
 գբօսնուլ առանց մասնաւոր հրամանի :

1007  
 1595

ԻԳ.

Ջանգակ զարնուելուն պէս՝ ամեն աշակերտ պի-  
տի փութայ սահմանեալ տեղը ժողովուելու :

ԻԳ.

Վարժարանին մեջ նոր տեսակ խաղ մտցրնելը՝  
մասնաւոր հրամանով միայն կլինի :

ԻԵ.

Ով որ բնկերներուն խաղալիքը կամ ուրիշ մեկ  
բանը առնէ առանց հրամանի՝ հրապարակաւ կը-  
յանդիմանուի. այն օրը շուր հաց միայն կուտէ, եւ  
գէթ ութը օր զքօսանիէ կըզրկուի. անկէց զաս՝  
եռամսեայ վկայագրին մեջ այս յանցանիքը կընշա-  
նակուի :

ԻԶ.

Ջքօսանաց ժամանակը լմրննալէն հինգ վայր-  
կեան առաջ զանգակը կըզարնուի, եւ ամեն աշա-  
կերտ պիտի պատրաստուի. խաղալիքները որոշուած  
տեղը տանի ամփոփէ, ջուր խմէ, հարկաւորութեան  
երթայ, այնպէս՝ որ երկուրդ նշանը տրուելուն պէս՝  
կարենայ կարգին մեջ շարուիլ :

ԻԷ.

Նրեկոյեան աղօթքէն ետեւ՝ աշակերտները կարգաւ  
կըշարուին սրահին կամ բակին մեջ, եւ նշանն որ  
տրուի՝ ամեն խումբ իւր ննջարանը կերթայ :

### ԻԸ.

Ով որ աղօթքէն առաջ պատրաստուած շիինի, եւ հարկադրուի յէտոյ ջուր խմելու կամ հարկաւորութեան երթալու, երկրորդ առաւօսը յանցանիկն համեմատ կրպատժուի :

### ԻԹ.

Ննջարանն որ երթան, ամեն աշակերտ լռութեամբ եւ համեսութեամբ կրհանուի, երեսը կրխառակնի եւ կրպառկի :

### Լ.

Ննջարանին մեջ խօսողը կամ ծիծաղողը՝ խրատութեամբ կրպատժուի :

### ԼԱ.

Ամեն աշակերտ շաբաթը երկու անգամ ներսակեղեր կրփոխէ, եւ ամեն օր ոտքի ամանները :

### ԼԲ.

Ամենեւին հրաման զկայ ցորեկը ննջարաններն երթալու. նմանապէս արգելած է հաշարանը, խոհակերոցը, հանդերձատունը եւ վերակացուաց կամ ծառայից սենեակները մտնել որ եւ իցի պատճառաւ առանց մասնաւոր հրամանի :

### ԼԳ.

Հրաման զկայ ամենեւին ծառաներուն հետ խօսելու, մանաւանդ հաշարանին եւ ննջարանին մեջ,

ուշ անոնց հետ կասակ անելու եւ ոչ անոնցմէ բան  
ուզելու, այլ ամենայն բան վերակացունեռեն պիտի  
ուզուի :

ԼԳ.

Նրբոր մեկը պատիժ մը կրնդունի, առաջ պիտի  
կասարե զայն . եւ յետոյ եթէ ասելիք մը ունի, յետ-  
ջին հասկըցընէ :

ԼԵ.

Մեծ յանցանք է մեծաւորաց, յետջին, վարժա-  
պետաց եւ վերակացուաց դէմ խօսիլն եւ անցա հրա-  
մանին շինազանդիլը :

ԼԶ.

Կանոնաց դէմ գործողն եւ ուսման ծուլութիւն  
անողը՝ զբօսանքի համար պարտելու երթալէն  
կրգրկուի :

ԼԷ.

Շրջագայութեան ժամանակին միշտ հասակի  
կարգաւ եւ զոյգ զոյգ կերթըցաւի, եւ ամեն աշա-  
կերտ իւր հովիւնին հետ միայն կխօսի ցած ձայնով :

ԼԸ.

Նշան տուելէն առաջ կարգէն դուրս ելլելը կամ  
առանց հրամանի ուրիշներէն հեռանալը արգելած է :

ԼԹ.

Եկեղեցին հանդարտութեամբ կրմտնէ ամեն մարդ,  
իրէն համար որոշուած տեղը կրկանգնի, երեք ան-

գամ կես մեջեն խոնարհելով երեսը կրխառակնի,  
յետոյ համեսուրեամբ, առանց ապիս անդին  
նայելու, առանց ամենեւին խօսակցութիւն անելու  
ուշ կրդնէ Աստուածային պաշտամանց մինջեւ վերջը:

Խ.

Ամենեւին հրաման ջկայ ծառայի կամ ո՛ր եւ  
իցէ օսար մարդու ձեռքով բան առնելու եւ գնելու:

ԽԱ.

Ի՛նչ ալ որ ծնողք կամ բարեկամք բերեն աշակեր-  
տաց, առաջ տեսչին պիտի ցուցուի:

ԽԲ.

Ամեն աշակերտ պարտական է ծնողացը ամիսը  
մի անգամ նամակ գրելու:

ԽԳ.

Ամենեւին հրաման ջկայ ծածուկ նամակ գրելու  
օտարաց:

ԽԴ.

Աշակերտաց վարձն եւ ուսմունքը գովելի եւ  
պարտաւելի նշանակներով կրգրուին. այն նշանակ-  
ները ամեն ամիս հրապարակաւ կրկարդացուին,  
եւ աղէկներուն վարձատրութիւն, վատերուն պատիժ  
կրտուի: Երեք ամիսը մեյմըն ալ այն նշանակնե-  
րուն գումարը ծնողաց կրյուղարկուի:

ԽԵ.

Երկու կիրակին մէյմբ հրաման կրտուի ծնողաց  
սունը կամ բարեկամներուն երթալ այն աշակերտաց,  
որ ուսման եւ վարուց կողմանէ գովելի գտնուել են:  
Ով որ ամեն կողմանէ գովութեան արժանի եղած է,  
ամեն կիրակի կրնայ սուն երթալ, եթէ ծնողքը կամ  
բարեկամները իրենց ղրկեն ծառայ մը նորա ետեւն:

ԽԶ.

Ծնողաց կամ բարեկամաց սունը գնացած աշա-  
կերտք՝ նշանակած ժամուն վարժարանը պիտի գրտ-  
նուի: Դրսէն ինչ որ բերէ, առաջ տեսին պիտի  
ցուցրնէ:

ԽԷ.

Ծուխ քաշելը սաստիկ խստութեամբ արգելած է,  
թէն ծնողաց եւ բարեկամաց սունը:

ԽԸ.

Մէկն որ հիւանդանայ՝ հիւանդանոցը կրորկուի,  
եւ առանց մասնաւոր հրամանի բժշկին չկրնար  
անկէց ելլել: Հիւանդին այցելութիւն գնացողն ալ,  
նվ կուգէ լինի, հրաման պիտի ունենայ տեսնն:






## ՆԿԱՐԱԳԻՐ ԸՆՏԻՐ ԱՇԱԿԵՐՏԻ.



Այն աշակերտն է գովութեան արժանի  
Որ հաւատոյ նիւթեր սիրով ուսանի .  
Աղօթք ընէ առտու իրկուն մըտադիւր ,  
Ստեպ առ Աստուած դառնայ փափաք եւ միտք իւր :  
Ամեն իրկուն յիշէ զբարիսն Աստուծոյ ,  
Իրմէ խնդրէ շնորհք եւ նըպաստ իւր գործոյ .  
Յեկեղեցին միշտ է պարկեշտ պատկառոտ ,  
Զըսեր մտքէն , աղօթքս ըլլար համառօտ :  
Յըրուած մըտօք ասդիս անդին ջընայիր ,  
Քարոզ թէ կայ՝ սիրով լինի ունկընդիր .  
Սորվի մասունք սուրբ հաւատոյ եւ ծեսեր ,  
Եկեղեցոյ անձանց ուիրաց գեշ ջըսեր :  
Ոջ պաղ կըլլայ եւ ոջ կեղծեօք ջերմեռանդ ,  
Այլ հոգեւոր հօրն է հըլու եւ հնազանդ :




Օր ջանցըներ որ ջըյիշէ հայրն ու մայր ,  
Թէ ողջ ըլլան յաստիս եւ թէ յայն աշխարհ :  
Անոնց խօսքէն դուրս ոջ երբեք նա կելի ,  
Հաճոյանայ իրենց ամեն ջանք կընէ .  
Խորհուրդ անոնց կըհարցընէ միշտ սիրով ,  
Ոջ երբեք սուտ կըսէ եւ ոջ կայ խըռով :

Տան դիպութեանց վըրայ երբեք ջըխօսիր ,  
Ծընողաց դեմ ուրիշներուն ջըզանգտիր .  
Անոնց ցաւին բոլոր սըրտանց ցաւակից ,  
Եւ խնդութեանը միշտ կըլլայ խընդակից :

Եղբարցն ու քերց սէր ցուցանէ կարողին ,  
Իրմով պարծին , իրմով ի վիշտ ըսփոփին .  
Ստեպ բուղբ զըրէ անոնց սիրոյ կամ խըատու ,  
Զըտայ տեղի սըտին մեշ ջար նախանձու :

Կրօնի ջրներ անոնց հետ նա բընաւին ,  
Վեճ քե բացօթի՛ նայի որ շուտ հաշտութիւն .  
Ազգականները ոչ երբեք կանարգէ ,  
Այլ անոնց սերն ու երախտիք կըյարգէ :



Իւր մեծերուն խօսքէն բընաւ դուրս ջնկեր ,  
Միշտ անտրտունջ կըկատարէ իւր պարտքեր .  
Ոչ կամապաշտ է , ոչ յամառ եւ ոչ բիրտ ,  
Այլ իբրեւ մում կակուղ է խօսք իւր եւ սիրտ :

Վարժապետաց արդիւնքն ու սեր կըճանչնայ ,  
Եւ կընայի որ անոնց աչքը մըտնայ .  
Թէ խստութիւն եւս ընեն՝ յիս ջըպահեր ,  
Անոնց խօսքն ու վարքը բնաւ չաճհամարհեր :

Երէ խրատեն՝ ջըտար ընդդէմ պատասխան ,  
Այլ եւ սիրով կընդունի ինչ պատիժ տան .  
Վարպետներուն հետ վախնայով ջըվարութիւր ,  
Այլ միշտ պատուով , միշտ համարձակ սիրալիւր :



Ձե մարդատեաց եւ ոչ քաշուող մենակեաց ,  
Զքարք բնութեամբն է սիրելի ընկերաց .  
Ուրիշի սիրտը ոչ երբեք ցաւցընէ ,  
Ինչ որ բարիք կուգայ ձեռքէն՝ միշտ կընէ :

Ազնիւ բարքով ընկերաց հետ ընտանի ,  
Եւ ոչ մեկուն հետ պաղ վարմունք՝ յիս ունի .  
Քաղաքավար , ներողամիտ , քաղցրախօս ,  
Ոչ առնըւող , ոչ դեզ եւ ոչ սըտախօս :

Ուրիշներու խօսակցութիւն ջըկըտրեր ,  
Եւ մտքերնին յանդրգնարար ջըղատեր .  
Դուրս ջըհաներ ուրիշներուն պակասութիւն ,  
Շուտ կուտայ իր դէմ եղածին թողութիւն :

Միշտ կըխորշի հրամայական կերպերէն ,  
Եւ ստեպ ըստեպ ծաղրածութիւն ընելէն :

Ճշմարտութեան վրբայ սերտ սեր կունենայ ,  
Տրած խօսքէն ոչ երբեք ետ կըկենայ :


Կեղծատրիլ , շողոքորբել , սուտ խօսիլ ,  
Ո՛հ , ոչ երբեք . լաւ կըսեպէ նա մեռնիլ  
Քան խոտորիլ արդարութեան շաւիղէն ,  
Այլոց ընել զոր ջուգեր այլք իւր ընեն :

Զըբոնանար պզտիկ եղբարցը վրբայ ,  
Եւ ոչ մեկուն խորհուրդ կամ խրատ չար կուտայ .  
Ուրիշներու բանին չըլլար ինքը տեր ,  
Ինչ որ գրտաւ՝ իրեն քովը չըպահեր :

Առիթ կուգէ բարիք ընել ուրիշի ,  
Եւ ոչ երբեք չարիք կընէ ընդ չարի .  
Պատկառանօք պատիւ կընէ ծերօնեաց ,  
Եւ վրշտակից կըլլայ դժբաղդ տըկարաց :

Ոչ անձընդիւր է ոչ փնտռող իւր շահին ,  
Ունեցածէն այլք ալ ունին միշտ բաժին .  
Ժիր եւ արագ յամէն պարտոց կատարման ,  
Նա չանցընէր պարապ եւ ոչ մէկ վայրկեան :

Ոչ չափազանց շուտ՝ ոչ չափէ դուրս դանդաղ ,  
Այլ ըստ կարգի կընէ բաներն անյապաղ .  
Դասի ատեն խելքը վրբան կըպահէ ,  
Զըհասկըցած բանը նորէն հարցընէ :



Առողջութեանը վրբայ լաւ հոգ ունի ,  
Միշտ կըջանայ տեղեակ ըլլալ շատ բանի .  
Ուրիշներէն վար չըմընալ կընայի ,  
Այլ մանաւանդ անցնիլ գանոնք կաշխատի :

Ոչ յանդուգն է եւ ոչ վախկոտ , այլ խոհեմ ,  
Ըզգուշաւոր , բայց եւ արի վտանգի դէմ .  
Ոչ նըկատամբ մարդկանց պարտքէն ետ կենայ ,  
Ոչ բարեպաշտ երեսնալէն կամըջնայ :

Չըյաղքիր չար օրինակէ՛ չար խրատէ,  
Ինչ որ ճանչցաւ մէյմը քէ գեշ է՛ կատէ.  
Աստուծոյ սուրբ կամացն է միշտ համաձայն,  
Սիրով կըրէ նա զնեղութիւնս ամենայն :

Կըհամբերէ ուրիշներու քերութեանց,  
Գիտէ որ ինքն ալ տկարութեամբ է զգածուած .  
Խոնարհամիտ է եւ համեստ ու ցածուն,  
Շատ չըխօսիր ինքիր վըրայ ամենուն :


Չըպարծենար խելքին, տեսքին, ըստըկին,  
Գիտէ քէ ստոյգ մարդուս արժեքն է ներքին .  
Չափ կըճանչնայ ամեն բանի հարկաւոր,  
Բան մը չըրած՝ կըմըտածէ վերջն անոր :

Մարդըս կուտէ որ ապրի, գայս քաջ գիտէ,  
Ոչ քէ կապրի անոր համար որ ուտէ .  
Ուստի իրեն պարզ կերակուրն ամեն տեղ  
Թէ բաւական կերեւնայ միշտ քէ համեղ :


Ինչ որ կընէ՛ է կանոնով ու կարգով,  
Բոլոր գըքերն ու թուղքերն են լաւ շարքով .  
Վըրան գըլուխն է միշտ մաքուր եւ կոկիկ,  
Քան զմաքրութիւն չըճանչնար զարդ գեղեցիկ :



# Խ Ր Ա Տ Ք .



ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻԻՆ .



*Հրահանգք բարեպաշտութեան .*

Կալ քեզ առաջնորդ ըզսերն Աստուծոյ ,  
Նրմին միայնոյ նախ լիջիր հաճոյ :



ԾՆՈՂՔ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ .



*Պարսք որդոց առ ծնողս .*

Պատկեր Աստուծոյ գծրնողսրդ ծանիր ,  
Լեր բանից նոցին սիրով ունկընդիր :

*Եղբայրսիրութիւն .*


Զեղբայր քո գիտեա բարեկամ բնատուր ,  
Ի նմանե օգնեալ՝ քաղաք ես ամուր :

*Սեր ազգակցաց .*

Սիրեա զազգակից եւ օգնեա նրմին ,  
Նրմա լեր կարօտ քան թե օտարին :



ԴԱՍՏԻԱՐԱԿՔ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՔ .



*Հնազանդութիւն .*

Հնազանդեա վեճից սիրով եւ ընդ փոյք ,  
Եւ մի երկբայիր , ուղիղ է անքոյք :

*Մտեմուտքիւն .*

Որ սիրէ զխրատ' սիրէ զառաջնորդ ,  
Իբրո՞ւ գհրեշտակի բարւոյ փոխանորդ :

*Մեծարանք .*

Մի լինիր դրժնեայ , մի արհամարհոտ ,  
Մի սուպո՞ւ եւ անաստ , այլ միշտ պատկառոտ :

---

ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ .

*Ընկերսիրուքիւն .*

Թէ բարիք են քո կամ իրք հեշտական ,  
Բաժինս դո՞ւ անտի եւ ընկերաց հան :

*Արդարուքիւն .*

Ձոր քեզ չըկամիս' մի առներ այլում ,  
Ձընկերին ըզկիբս իմա յանձին քում :

*Բարեարուքիւն .*

Ըզբարիս գործել դո՞ւ մի ձանձրանար ,  
Տեսցես զի քաղցր է զոյ այր բարերար :

*Անշահասէր քարք .*

Անձինրդ շահո՞ւ մի յոյժ հետամուտ ,  
Մի յամբ եղիցիս յընկերին օգուտ :

---

ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՐՏԻ .

*Եռանդն ի գործ .*

Թէ պարտուցդ ի լրոսմն իցես ժըրաջան ,  
Յամենայն ի կեանսդ զըտցես դո՞ւ օճան :

**Յարասեւորփուն .**

Որ անխոնջ բերի յուսմանըն վաստակ ,  
Նա անշուշտ առնու գնախկինըն պըսակ :

**Ճարտարեւտփուն .**

Լեր ճարտար ի գործ , ի գիտ հընարից .  
Ճարտարքըն մըտօք հարք են արուեստից :

**Նախանձ բարի .**

Վառեաց ընդ բարիս ի նախանձ բարի ,  
Ամաչեա լինել նըմանող ջարի :

**Հասսաստփուն .**

Այր է իմաստուն որ կայ հաստատուն .  
Կընիք անմըտի՛ խիստ յամառութիւն :

**Արիտփուն .**

Զիք ինչ անհընար՛ թէ իցես արի .  
Զիք իմիք հընար՛ թէ վատ անարի :

**Երկայնեւտփուն .**

Կամիս յաջողել յուսումն եւ ի փորձ ,  
Լեր երկայնամիտ ի ջան եւ ի գործ :

**Համբերտփուն .**

Ըգմարդիկ կալջիր գիարդ եւ իցեն ,  
Եւ ըզդեպս իրաց գիարդ եւ գայցեն :

**Խոնարհտփուն .**

Որ գանձն ի խոնարհ ունի՛ բարձրացի ,  
Եւ որ բարձրանայն վաղ խոնարհեացի :

**Խոհեւտփուն .**

Ամենայն իրաց ջափ գոյ եւ սահման ,  
Բայց ոչ աչալուրջըն խոհեւտքեան :

*Զափաւորութիւն .*

Որ ի միջին կայ՝ նա է այր ընտիր ,  
Յերկուցքն ծայրից խընամով փախիր :

*Պարկեշտութիւն .*

Զմանուկ սիրելի գործեն պարկեշտ բարք ,  
Հանդերձքն կոկիկ եւ անարատ վարք :

*Կարգաւորութիւն .*

Ուսիր ի կարգի ունիչ զամենայն ,  
Իրամդ եւ ժամանակ ոչ ծախին ունայն :


*Խնայութիւն .*

Մի երեսեցիս ազան եւ կրծծի ,  
Բայց եւ խընայող՝ ձեռքն քո լիցի :






## ԱՂՕԹԻ ԱՌԱՒՕՏՈՒ.




Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամեն :

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն  
քո. եկեաց արեւոյութիւն քո. եղիցին կամք քո որ-  
պէս յերկինս եւ յերկրի: Ջիւղ մեր հանապազորդ  
սուր մեզ այսօր. եւ բող մեզ զպարսիս մեր, որպէս  
եւ մեք բողումք մերոց պարսապանաց: Եւ մի՛ սա-  
նիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի ջարե:  
Ջի քո է արեւոյութիւն եւ զօրութիւն, եւ փառք յա-  
ւիտեանս. ամեն :



Տեր, եթէ զգրբունս իմ բանաս, բերան իմ եր-  
գեաց քօրհնութիւնս քո: Տեր, եթէ զգրբունս իմ բա-  
նաս, բերան իմ երգեաց քօրհնութիւնս քո:

Օրհնեալ համազոյ եւ միասնական անբաժանելի  
սուրբ Երրորդութիւն՝ Հայր եւ Որդի եւ Հոգի սուրբ,  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամեն :



Հովիւ քաջ, հովիւ բարի եւ յաւիտեանական,  
նայեաց եւ այց արա բանաւոր հօտի քո, զոր ժողո-  
վեցեր առ մեզ գրութեամբդ քով. զի քո առաջի

կամք, Տէր, եւ առ ի քեզ ողորմութեանցդ եւ գթութեանցդ ակն ունիմք: Չամենեսեան օրհնեալ, զամենեսեան խմասնացո, զամենեսեան լուսաւորեալ, եւ ամենեցուն պարգեւեալ զերկնից արքայութիւնդ. վասն զի դու եւ Տէր կենաց եւ Աստուած ողորմութեանց, եւ քեզ վայելի փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամեն:

Չառաւօտու զաղօթս եւ զքանաւոր պատօսնս ընկալ ամենակալ ամենամեծդ Աստուած ի քո յանապական եւ յերկնային խորանոց: Ծագեալ առ մեզ զարդարութեան եւ զխմաստութեան զլոյս քո. արա զմեզ որդիս լուսոյ եւ որդիս տւրնօղեան. որպէս զի ի գալ աւուրս երկիւղածութեամբ վարեցումք ըզկեանս մեր, եւ առանց զայրակողութեան կասարեցումք: Չի դու եւ օգնական եւ փրկիչ մեր, եւ քեզ վայելի փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամեն:

---

Մայր սուրբ սեանշէի լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր, եւ ցնծութիւն աշխարհի ձնար զԲանն Աստուած. աղաչեմք:

*Մայր սուրբ, բարեխօսեալ:*

Աղաչեալ վասն մեր զառ ի քեզ զմարմնացեալն Աստուած. որ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ,

եառ մարմին ըստ մարդկային բնութեանս, առնել խաղաղութիւն յերկինս եւ յերկրի. աղաջեմք :

*Մայր սուրբ, բարեխօսեա :*

Աղաջեա վասն մեր զառ ի քեզ զմարմնացեալն Աստուած. ներել մեզ, անեստ առնել զյանցանս մեր եւ Տալ օգնականութիւն՝ ընդդիմակաց լինել հակառակամարտիցն ի պատերազմի. աղաջեմք :

*Մայր սուրբ, բարեխօսեա :*

Աղաջեա վասն մեր զառ ի քեզ զմարմնացեալն Աստուած. զի լռեցեն պատերազմունք, դապարեսցին յարձակմունք թշնամեաց, ճնկեցի սեր եւ արդարութիւն ի յերկրի. աղաջեմք :

*Մայր սուրբ, բարեխօսեա :*

Աղաջեա վասն մեր զառ ի քեզ զմարմնացեալն Աստուած. անեցուցանել յերկրի մերում զբաղք բլրխումն աղբերաց, զառաս պտղաբերութիւն բուսոց եւ ճնկոց, առ ի զուարնալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց. աղաջեմք :

*Մայր սուրբ, բարեխօսեա :*

Աղաջեա վասն մեր զառ ի քեզ զմարմնացեալն Աստուած. զի միաբանեցե՛ք զեկեղեցի իւր սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարեից, պահել անարատ մինչեւ յօր երեւելոյ զալստեան իւրոյ. աղաջեմք :

*Մայր սուրբ, բարեխօսեա :*

Աղաջեա վասն մեր Սրբուհի զմիածին և զմր-  
դին եւ վասն հոգւոցն հանգուցելոց, ընդունել յար-  
խայուքիւն երկնից, եւ սալ մասն եւ բաժին ընդ  
սուրբս ամենայն. աղաջեմք :

*Մայր սուրբ, բարեխօսեա :*

Եւ եւս առաւել գյորդորումն սիրոյ եւ զգործս  
բարեաց պարգեւել մեզ խնդրեմք :


*Տուր մեզ, Տէր Ասուած մեր :*

Ջանձինս մեր եւ զմիւեանս Տէառն Ասուծոյ  
ամենակալին յանձն արասցուք :


*Քեզ Տէառնդ յանձն եղիցուք :*

Ողորմեաց մեզ, Տէր Ասուած մեր՝ ըստ մեծիո-  
ղորմութեան քում. ասասցուք ամենեւեան միաբա-  
նութեամբ .

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա. մայր սուրբ, բա-  
րեխօսեա առ Տէր վասն մեր :*



## ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԻՆ.



Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ . ամեն :

Հաւասով խոսովանիմ եւ երկիր պագանեմ  
քեզ , Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի , անեղ եւ ան-  
մահ բնութիւն , արարի՞ք հրեշտակաց եւ մարդկան եւ  
ամենայն եղէլոց . ողորմեա քո արարածոցս եւ ինձ  
բազմամեղիս :

Հաւասով խոսովանիմ եւ երկիր պագանեմ քեզ ,  
անբաժանելի լոյս , միասնական սուրբ Երրորդու-  
թիւն եւ մի Ասուածութիւն , արարի՞ք լուսոյ եւ հա-  
լածի՞ք խաւարի . հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար  
մեղաց եւ անգիտութեան , եւ լուսաւորեա զմիսս իմ  
ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հանոյս եւ ընդու-  
նել ի քե՛ն զխնդրուածս իմ . եւ ողորմեա քո ար . :

Հայր երկնաւոր Ասուած նեւարի՛ս , որ առաքե-  
ցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխա-  
րին . մեղայ յերկինս եւ առաջի քո . ընկալ զիս որ-  
պէս զանառակ որդին , եւ զգեցո ինձ զպատմու-  
նանն զառաջին զոր մեղացայ մեղօք . եւ ողոր . :

Որդի Ասուծոյ Ասուած նեւարի՛ս , որ խոնար-  
հեցար ի հայրական ծոցոյ , եւ առեր մարմին ի սրբ-  
ոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան .  
խառեցար , թաղեցար , եւ յարեար ի մեռելոց , եւ  
համբարձար փառօք առ Հայր . մեղայ յերկինս եւ

առաջի քո. յիշեալ զիս որպէս զաւագակն՝ յորժամ  
գաս արհայուրեամբ քով. եւ ողոր.:

Հոգի Աստուծոյ Աստուած նշմարիտ, որ իջեր ի  
Յորդանան եւ ի վերնասուռնն, եւ լուսաւորեցեր զիս  
մկրտութեամբ սուրբ աւագանին. մեղայ յերկինս եւ  
առաջի քո. մաքրեալ զիս վերստին Աստուածային  
հրով քով՝ որպէս հրեղեն լեզուօք սուրբ զառա-  
քեալսն. եւ ողորմեալ քո ար.:

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով  
եւ մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝  
վասն անուանդ քում արքոյ. եւ ողոր.:

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բա-  
նիւ եւ գործով. ջնջեալ զձեռագիր յանցանաց իմոց,  
եւ գրեալ զանուն իմ ի դպրութեան կենաց. եւ ող.:

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամայ եւ ակա-  
մայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. բողբոջիւն  
շնորհեալ մեղաւորիս, զի ի ծննդէն սուրբ աւագա-  
նին մի՛նչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուա-  
ծութեանդ քո զգայարանօք իմովք եւ ամենայն ան-  
դամօք մարմնոյս. եւ ողոր.:

Ամենախնամ Տէր, դիր պահապան աջաց իմոց  
զերկիւղ քո սուրբ՝ ոչ եւս հայել յարաս, եւ ական-  
ջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս շարութեան,  
եւ բերանոյ իմոյ ոչ խօսել զսուրբիւն, եւ արտի ի-  
մոյ ոչ խորհել զշարութիւն, եւ ձեռաց իմոց ոչ  
գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց ոչ գնալ ի  
նանապարհս անօրհնութեան. այլ ուղղեալ զժար-  
ժումն սոցա լինել միտք ըստ պատմութեանաց քոց յա-  
մենայնի. եւ ողոր.:

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր  
արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ, զի այրեացե  
զախոս հոգւոյ իմոյ, եւ սրբեացե զխիղն մտաց իմոց,  
եւ մաքրեացե զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեացե  
զլոյս զիտութեան քո ի սրտի իմուս. եւ ողոր.:

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ զիմաստու-  
թիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի  
քո յամենայն ժամ. ի ջար խորհրդոց, ի բանից եւ  
ի գործոց փրկեա զիս. եւ ողոր.:

Կամեցող բարեաց Տէր կամարար, մի՛ բողուր  
զիս ի կամս անձին իմոյ զնալ, այլ առաջնորդեա  
ինձ լինել միշտ ըս կամաց քոց բարեսիրաց. եւ ող.:

Արեայ երկնաւոր, տուր ինձ զարեայութիւն քո՝  
զոր խոսացար սիրելեաց քոց. եւ զօրացո զսիրտ իմ  
ասել զմեղս, եւ սիրել զեզ միայն, եւ առնել ըզ-  
կամս քո. եւ ողոր.:

Խնամող արարածոց, պահեա նշանաւ խառի քո  
զհոգի եւ զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի  
փորձութեանց դիւաց, եւ ի մարդոց անիրաւաց,  
եւ յամենայն վսանգից հոգւոյ եւ մարմնոյ. եւ ող.:

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի  
լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիւերի, ի նստել ի  
տան, ի զնալ ի նանապարհ, ի ննջել եւ ի յառ-  
նել, զի մի՛ երբեք սասանեցայց. եւ ողոր.:

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո եւ լնուս  
զամենայն արարածս ողորմութեամբ քով. եւզ յանձն  
առնեմ զանձն իմ. դու հոգա եւ պատրաստեա ըզ-  
պէսս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմհետե միևնու  
յաւիտեան. եւ ողոր.:

Դարձուցի՞ք մոլորելոց, դարձն զիս ի շար սովորութեանց իմոց ի թարի սովորութիւն, եւ բեւեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ գեհեկոյն եւ զսէր արհայութեանն, զի զղջացայց ի մեղաց, եւ գործեցից զարդարութիւն. եւ ողոր.:

Աղբիւր անմահութեան, աղբերացո ի սրտե իմմե զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհես. եւ ողոր.:

Պարգեւի՞ք ողորմութեան, պարգեւեա ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով, եւ սուրբ մարմնոյ եւ արեան քո հաղորդութեամբն զալ առ քեզ, եւ ողորմեա քո ար.:

Բարեբար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ եւ անխռով անցուցանել ընդ շարութիւն այսոցն որք են ի ներքոյ երկնից. եւ ողոր.:

Լոյս նշմարի՞ք Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոռման աւուրն, եւ հանգստել յուսով բարեաց յօրեանս արդարոց մինչեւ յօր մեծի զալստեան քո. եւ ողոր.:


Դասաւոր արդար, յորժամ զաս փառօք Հօր դասել զկենդանիս եւ զմեռեալս. մի՞ մտաներ ի դասասան ընդ ծառայի քում, այլ փրկեա զիս ի յաւիտեանական հրոյն, եւ լսելի արա ինձ զերանաւե կոռումն արդարոց յերկնից արհայութիւնդ. եւ ող.:

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծա-



նօթից, կենդանեաց եւ մեռելոց. շնորհեա եւ քրե-  
նամեաց իմոց եւ ասելեաց զթողութիւն որ առ իս-  
յանցանաց, եւ դարձն զնոսա ի շարեացն զոր ու-  
նին վասն իմ, զի ողորմութեան ինչ արժանի է-  
դիցին. եւ ողոր.:

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաքանս ծառայիս  
ին, եւ կատարեա ի բարի զխնդրուածս իմ, բարե-  
խօսութեամբ արբուհւոյ Աստուածածնին, եւ Յովհան-  
նու մկրտչին, եւ արքայն Ստեփանոսի նախավկային,  
եւ արքայն Գրիգորի մերոյ լուսաւորչին, եւ արքոց  
առաւելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրո-  
սաց, հայրապետաց, նգնաւորաց, կուսանաց,  
միանձանց եւ ամենայն արքոց ինչ երկնաւորաց եւ  
երկրաւորաց: Եւ ինչ փառք եւ երկրպագութիւն ան-  
բաժանելի սուրբ Նրորդութեանդ՝ յաւիտեանս յա-  
ւիտենից. ամեն:



Փառք ինչ, Տէր Աստուած մեր, որ պարգեւեցեր  
զօրս զայս բարեալ եւ խաղաղութեամբ անցուցա-  
նել: Մարդասէր Աստուած, զառաջիկայ գիշերս որ  
ի վերայ մեր գալոց է՝ ի մեղաց փրկեա, ի շարեաց  
ազատեա, ի գործս բարիս առաջնորդեա: Առաւօ-  
տու օրհնութեանցն եւ փառաբանութեանցն արժա-  
նի արա զամենայն հաւասացեալս անուանդ ինչ  
արքոյ, եւ պահեա ի խաղաղութեան:

Տէր Աստուած մեր, տուր զին խաղաղութիւնդ  
ամենայն աշխարհի, բարձ զգաստմն եւ զպատու-  
հասն ի յարարածոց: Ողորմեա հարց եւ եղբարց մե-

րոց, կենդանեաց եւ հանգուցելոց: Ողորմեա գեկե-  
ղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուից, սպա-  
սաւորաց, եւ այնոցիկ որք ընդ հովանեաւ սրբոյ  
սանարիս են հանգուցեալ:

Տէր Աստուած, օգնեա թագաւորաց քրիստոնէից,  
եւ իշխանացն բարեպաշտից, զօրաց եւ զաւակաց  
նոցիկն պահելով ի խաղաղութեան:

Տէր Աստուած մեր, պահեա զառաջնորդս եւ զեղ-  
բայրութիւնս մեր, ամբողջ եւ անխռով ի կամս ո-  
ղորմութեան քո:

Նշանաւ սուրբ եւ պատուական խառի քո հա-  
լածեա գերեւելի եւ զաներեւոյթ թեմամին ի սահմա-  
նաց մերոց եւ ի բնակութենէս մերմէ:

Փրկեա զմեզ ի հրոյն յաւիտենից: Եւ քեզ փառք  
յաւիտեանս. ամեն:

Յիշեա, Տէր, զպաշտօնեայս քո, զծնողսն մեր,  
զվարդապետս, զեղբարս, զընկերս, զկերակրիշս,  
զուխտաւորս, զհանապարհորդս, զհանգուցիշս, ըզ-  
վասակաւորս, զխոստովանողս, զապաշխարողս,  
զգերիս, զհիւանդս, զնեղեալս, զիշխանս, զքարա-  
րարս, զբարերարս, զթեմամիս, զատելիս, եւ որք  
պատուիրեցին մեզ հաւատով:

*Յիշեա Տէր եւ ողորմեա:*

Հայր մեր որ իրեցինս:



## Յ Ո Ւ Յ Ա Կ


աշակերտաց Խալիպեան Ուսումնարանին ի սկիզբն դպրոցական 1859 — 1860 տարւոյս, ըստ այբուբենական կարգի մականուանցն :

1. Աբգարեան Աբրահամ, յԱգփրմանէ .
2. Ալքրնթոփեան Գրիգոր, ի Թեոդոսիոյ .
3. Ալքուննեան Աղեփանդր, ի Թեոդոսիոյ .
4. Ալքուննեան Գաբրիէլ, ի Թեոդոսիոյ .
5. Ալքուննեան Կոստանդին, ի Թեոդոսիոյ .
6. Աղապալեան Մկրտիչ, ի Նոր Նախիջեւանէ .
7. Առեփեան Յարութիւն, ի Նոր Նախիջեւանէ .
8. Բեկնազարեան Ղազարոս, յԷջմիածնէ .
9. Գալեմփեարեան Գրիգոր, ի Տրապիզոնէ .
10. Գանձապետեան Վահան, ի Նոր Նախիջեւանէ .
11. Գարագաշեան Յակոբ, ի Սիմֆերոփոլէ .
12. Եազպահարեան Մկրտիչ, ի Հին Խրիսէ .
13. Եղիազարեան Բարսեղ, յԵրեւանէ .
14. Երամեան Եղուարդոս, ի Կոստանդնուպօլսոյ .
15. Թաթսիզեան Գրիգոր, յՍտեասայէ .
16. Իսփենսիարեան Ղազարոս, յՕրպազարէ .
17. Լազարեան Գեորգ, յԱլեփայէ .
18. Լահանապաշեան Սարգիս, ի Գրիգորիոպօլսոյ .
19. Խարիպեան Մկրտիչ, ի Սիմֆերոփոլէ .
20. Խոնապարոնեան Կարապետ, ի Մելիտոփոլէ .

21. Խուպեան Աղեփաանդր , ի Տփխիսք .
22. Խուպեան Կարապետ , ի Տփխիսք .
23. Ճեհանեան Մկրտիչ , յՕրպազարե .
24. Մազերով Ներսէս , ի Թեոդոսիոյ .
25. Մազրումեան Մկրտիչ , ի Խարասուե .
26. Մախարմանեան Սարգիս , ի Նոր Նախիջեւանե .
27. Մամիկոնեան Սիմեոն , ի Խարասուե .
28. Մանսրանեան Կարապետ , ի Հին Խրիսե .
29. Մարկոսեան Մկրտիչ , ի Զմիւռնիոյ .
30. Մարմարեան Գասպար , յՕրպազարե .
31. Մարուքեան Սարգիս , յԱզգիրմանե .
32. Մարտիրոսեան Մկրտիչ , ի Նոր Նախիջեւանե .
33. Մելիումեան Աթանազիսե , ի Տփխիսք .
34. Մերկեանեան Սիմեոն , ի Քերշե .
35. Մերնանեան Յովհաննէս , ի Գրիգորիոպօլսոյ .
36. Մրնկոեան Աղեփաանդր , ի Խարփովե .
37. Մինասեան Սարգիս , ի Նոր Նախիջեւանե .
38. Մկրտեան Մկրտիչ , ի Սիմֆերոփովե .
39. Մովնեան Անտոն , ի Թեոդոսիոյ .
40. Մովնեան Մարգար , յԵւպատրիոյ .
41. Մուրատեան Յովսէփ , ի Շամշասիսե .
42. Մսերեան Խաչիկ , ի Հնօշեսե .
43. Մսերեան Մարտիրոս , ի Հնօշեսե .
44. Մսերեան Մկրտիչ , ի Սիմֆերոփովե .
45. Յարուքիւնեան Կարապետ , ի Քիշնեւե .
46. Շահինեան Վաղարշակ , ի Գրիգորիոպօլսոյ .
47. Շահիպեան Սարգիս , ի Սիմֆերոփովե .
48. Շիշիկեան Մանուէլ , ի Թեոդոսիոյ .
49. Ոսկերշեան Կարապետ , ի Նոր Նախիջեւանե .

50. Չեռնիկեան Պէտրոս , ի Մէլիսոպօլի .
51. Չեմպերնեան Գեորգ , ի Թեոդոսիոյ .
52. Չեմպերնեան Յովհաննէս , ի Թեոդոսիոյ .
53. Չեմպերնեան Սարգիս , ի Թեոդոսիոյ .
54. Պալասանեան Դաւիթ , ի Պոքուշանի .
55. Պաղտիկեան Քրիստոսոս , ի Նողայսի .
56. Պապիեան Մանուկ , ի Խարասուի .
57. Պապիեան Սեփանոս , ի Նոր Նախիջեանի .
58. Պարխուսարեան Սեփանոս , ի Գրիգորիոպօլսոյ .
59. Պէտրոսեան Արսէն , ի Վաղարշապատի .
60. Պինոյեան Մարտիրոս , ի Նոր Նախիջեանի .
61. Պոլուպէկեան Գրիգոր , ի Թեոդոսիոյ .
62. Զալալեան Նիկողայոս , յԵրեւանի .
63. Սագինեան Ղազարոս , յՕրպազարի .
64. Սաղունեան Ասուածասոս , յԱշտարակի .
65. Սաղիսեան Ղազարոս , ի Նոր Նախիջեանի .
66. Սաղիսեան Պէտրոս , ի Նոր Նախիջեանի .
67. Սամուէլեան Գրիգոր , ի Գրիգորիոպօլսոյ .
68. Սամուէլեան Մովսէս , ի Գրիգորիոպօլսոյ .
69. Սարգսեան Մարգար , ի Նոր Նախիջեանի .
70. Սելինեան Յովհաննէս Ա , ի Խարասուի .
71. Սելինեան Յովհաննէս Բ , ի Խարասուի .
72. Սքամպօլցեան Յակոբ , ի Սիմֆերոփոլի .
73. Սիմեոնեան Գեորգ , ի Նոր Նախիջեանի .
74. Սիմեոնեան Ներսէս , ի յԵրեւանի .
75. Սուպաշեան Առաքել , ի Թեոդոսիոյ .
76. Սուքիասեան Յովհաննէս , յՕրպազարի .
77. Սեփանոսեան Խաչատր , ի Նոր Նախիջ .
78. Սեփանոսեան Քերովբէ , ի Նոր Նախիջեանի .

79. Վզվզեան Համբարձում, ի Չալքրե.  
80. Տաւուսեան Յակոբ, ի Խարասուե.  
81. Տաւուսեան Յարութիւն, ի Խարասուե.  
82. Փախալեան Սիմէոն, ի Նոր Նախիջեւանե.



### Յ Ո Ւ Յ Ա Կ

յառաջադէմ աշակերտաց Խալիպեան Ուսում-  
նարանին, որք յետ իննամսեայ ժամանակի  
ըստ հարցաքննութեանցն եղելոց յՅոստոսի  
1859 ամի փոխադրեցան ի ստորին դասա-  
տանց ի վերինս:



*Ի նախակրթարանե փոխադրեցան յառաջին  
դասասուն.*

1. Աղապալեան Մկրտիչ .
2. Առեֆեան Յարութիւն .
3. Գալեմֆեարեան Գրիգոր .
4. Եազպահարեան Մկրտիչ .
5. Խոնապարունեան Կարապետ .
6. Խուպեան Աղեֆանդր .
7. Ճեհանեան Մկրտիչ .
8. Մազլումեան Մկրտիչ .
9. Մարմարեան Գասպար .
10. Մելիումեան Արամազիկե .

11. Մերնանեան Յովհաննէս .
12. Մովնեան Անտոն .
13. Մովնեան Մարգար .
14. Մուրատեան Յովսէփ .
15. Մսերեան Մարտիրոս .
16. Շիբլիկեան Մանուէլ .
17. Պարխուսարեան Սեփանոս .
18. Պինոյեան Մարտիրոս .
19. Սաղիսեան Պէտրոս .
20. Սամուէլեան Գրիգոր .
21. Սամուէլեան Մովսէս .
22. Սէլինեան Յովհաննէս Բ .
23. Սամայօյցեան Յակոբ .
24. Սիմեոնեան Գեորգ .
25. Սուփասեան Յովհաննէս .
26. Վզլզեան Համբարձում .
27. Փախալեան Սիմեոն .

*Յառաջին դասասանի փոխադրեցան յերկրորդն .*

1. Աբգարեան Աբրահամ .
2. Ալթունեան Կոստանդին .
3. Թարսիզեան Գրիգոր .
4. Մախարմանեան Մարգիս .
5. Չեռնիկեան Պէտրոս .
6. Չեռնիկեան Մարգիս .
7. Պաղտիկեան Քրիստոսուբ .
8. Պապիեան Սեփանոս .

9. Պոլուպէկեան Գրիգոր .
  10. Ասեփանոսեան Քերովբէ .
  11. Տաւուսեան Յակոբ .
- 

*Յերկրորդ դասասանի փոխադրեցան յերրորդն .*

1. Ալբունեան Գաբրիէլ .
  2. Եղիազարեան Բարսեղ .
  3. Մազերով Ներսէս .
  4. Մարուքեան Սարգիս .
  5. Մկրտչեան Մկրտիչ .
  6. Պալասանեան Դաւիթ .
  7. Սեփնեան Յովհաննէս Ա .
  8. Սուպաշեան Առաքել .
  9. Ասեփանոսեան Խաչատուր .
  10. Տաւուքեան Յարութիւն :
-





52.074